

ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՄԱԼԱԹԻԱ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԻՋԻՆ ԲՈՒԺԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ԿԻՃԱԿԸ, ՆՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԴԵՈՆՏՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

Սահակյան Կ.Ռ., Մարդիյան Մ.Ա.

Երևանի պետ. բժշկական համալսարանի առողջապահության կառավարման և Էկոնոմիկայի ամբիոն Երևան, Հայաստան

Բազմապրոֆիլ հիվանդանոցի բուժքույրերի առողջական վիճակի համալիր գնահատման համար կիրառվել է բժշկա-սոցիոլոգիական հետազոտման մեթոդ: Հետազոտման օբյեկտ են հանդիսացել «Մալաթիա» բժշկական կենտրոնի աշխատող բուժքույրերը: Կիրառվել է մեր կողմից մշակված սոցիոլոգիական հարցման մեթոդ: Հարցմանը մասնակցել է 144 բուժքույր: Ըստ սոցիոլոգիական հարցման տվյալների, իրենց առողջական վիճակը գերազանց են գնահատել ռեսպոնդենտների ընդամենը 2, 9 %-ը: Հարցման մասնակիցների 75,5 % -ն իրենց կյանքի որակը գնահատել են ցածր՝ պայմանավորված սուր կամ քրոնիկ հիվանդությամբ: Ստահոգի է հետևյալ փաստը. բուժքույրերի 33,6 %-ը հայտնել են այն կարծիքը, որ հնարավորության դեպքում կփոխեին իրենց մասնագիտությունը: Բուժքրոջ իրական պատկերը գնահատելու համար, սոցիոլոգիական հարցում իրականացրել ենք նաև բժիշկների, պացիենտների շրջանում: Ըստ պացիենտների, բուժքույրը պետք է իդեալական տիրապետի իր մասնագիտությանը (95 %), ունենա անձնական բարձր հատկություններ (42 %), իսկ յուրաքանչյուր հինգերորդի համար կարևոր նշանակություն է ունեցել բուժքրոջ արտաքին տվյալները: Մասնագիտական ունակությունների շարքում բարձր է գնահատվել հետևյալ հատկանիշները՝ կարգապահությունը, ուշադրությունը, բարեխղճությունը: Բժիշկներն իրենց գնահատման ժամանակ ևս կարևորել են բուժքրոջ պրոֆեսիոնալիզմը, անձնական հատկանիշները և արտաքին տեսքը: Ելնելով հարցման արդյունքներից, գտնում ենք, որ բազմապրոֆիլ հիվանդանոցի բուժքրոջ աշխատանքի օպտիմալացման համար անհրաժեշտ է արդյունավետ դարձնել բուժքրոջ աշխատատեղը՝ հաշվի առնելով մասնագիտացումը և պաշտոնական պարտավորությունները: Կարևորվում է նաև պարբերաբար մոնիթորինգի ենթարկել պացիենտների բավարարվածության աստիճանը՝ մատուցած ծառայությունների որակից, և այն համադրել սպասվելիք ցուցանիշների մակարդակի հետ: